

Chrysomel

Chrysomelae Designata 6 species

18/1/1907

891.995

u-43

Յ Ա Կ . Ա Ղ Ա Ր Ա Ր

Ա Յ Ծ Ա Ր Ա Ծ

ՂԱՂՈՆ



եհ

Ձ Ի Ա Ր Շ Ա Ի

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄԱՆԱԾԻ

եհ

ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

Նստել էր իրանց սրահումն և «տա-
ղը» ձեռք առած զընդ-զընդացնում էր
ու հաշի սպասումս:

Յանկարծ, որտեղից որ էր, չարա-
հըճի տղաները հառաքեցին Հեթիմի
կալը...

331.996
Պ-43

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Երկրորդաբարձ տպարան օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7.

1 9 0 7

(73)

5 FEB 2013


6340

891990

43


48

30 MAY 2011



ՆԱՆԻ ՆԻԵՐՆԵՐԸ

«Միփ-ծիփ, ծիփ-ծիփ, այ թըխամէր,
ձուտիկներդ առ, դէսը բեր,
Կուտ եմ տալու ընտրած կորեկ՝
Եկէք, կերէք ու շուտ կորէք»:
Թուխան եկաւ՝ կրըխկալէ,
Ձագուկները՝ ծըւծըւալէ,
Եկան նանի դուռը դառան,
Ժըւժըւոցով գլուխ տարան:
Նանը նրանց կորեկ տուաւ.
Տես թէ ինչպէս աքլար ու հաւ,
Մէկը միւսին կրտկրտալի,
Մեծ-մեծ կուտին են վազ տալի:
Իսկ թուռները՝ տղայ ու աղջիկ,
Թընգթընգում են խունջիկ-մունջիկ:
Որ նանն իրանց մէկ-մէկ ընծայ
Ձագուկներին բռնի ու տայ:



«Տէս էն ճուտիկ՝ կրմրշտուրիկ,
Քեզ եմ տալիս սիրուն Սուրիկ,
Իսկ Գիսակին սպիտակ ձագը,
էն կուարար գիժ որձակը»

«Չալտիկ ճուտն էլ, էյ Գայեանէ,
Լաւ պահպանիր, էն քո փայն է,
Սևուկ-մևուկ աքլորիկն էլ՝
Թո՛ղ Իսկուհուն լինի նւէր»

«Իսկ ինձ մնայ թխսամէրը
Ու էն մարիկ ճուտիկները,
Որ մեծանան և ձու ածեն,
Նորից մէկ-մէկ թուխսը նստեն»:

Ժ Ժ Ի Զ Կ Տ Ր Ա Ծ Ե Ր Ե Խ Ա Ն

(Նւէր իմ սան Սուրիկին)




այրիկ, ը... ըհը-ըհը,
ծիծի տու,
Շատ չէ, մայրիկ ջան,
մի պիծի տու...

Չէ, բայիկ ջան, չէ, ծիծին լաւ չի,
Կատուն տաքաւ, տես, ո՛նց կը փախչի...



Ա Յ Ծ Ա Ր Ա Ծ Ղ Ա Ղ Օ Ն

I




էքիմ Գէորգն եօթ արու զաւակ
ունէր: Նրանցից անդրանիկը-Ղահ-
րամանն, որին Ղաղօ էին կանչում,
փոքր հասակում ծաղիկ ընկնե-
լով՝ և սաստիկ չօփուռ էր մնացել, և մի աչքն էլ ծաղ-
կից կուրացել-ծաղկատար էր եղել: Ղաղօն քանի ջահել
էր՝ ոչինչ, ամեն բանում կտրիճ էր. երբեմն այծարած էր,
երբեմն ուլարած, երբեմն էլ գնում էր եկեղեցի և Տէր-
Մարտիրոսին ժամասացութեան ժամանակ օգնում: Օ՛, նրա
երգած «Տէր ողորմեան» և «Սուրբ Աստուածը» ղեռ այսօր
էլ գիւղացիների ականջումն են: Իսկ նրա սազ ածելու և
սրինգ նւագելու շնորհքն՝ իրանց գիւղում համարեայ թէ
ոչ ոք չունէր:

Նա թէև մի աչքով կոյր էր և նոյն իսկ «համբարք»
էլ չգիտէր, բայց և այնպէս իր հաշիւը շատ լաւ էր պա-
հում: Տասնեակ տարիներ նախրապանութիւն անելով,
գրեթէ անգիր էր արել իր արհեստը: Ղաղօն մէկէն ի մէկ
չէր կարող ասել թէ իր նախրի մէջ քանի այծ ու քանի
ուլ կայ, բայց ջուխտ ու կենտի հաշւով և ապրանքատի-
րոջ անուններով նա իսկոյն իմանում էր թէ այսօր ո՞ւմ
այծն է պակաս նախրից և կամ ո՞վ չէ ուղարկել արօտի
իր ուլը:

Գիւղացիք քաջ գիտէին Ղահրամանի հաւատարիմ բը-
նաւորութիւնն և իրանց այծն ու ուլն աներկիւղ նրա ա-
ռաջն էին անում:

Ղաղօն երկու ընկեր ունէր. մէկը Դարիտակենց Նէսօի տղան էր, որ ուլերն էր արածացնում, միւսն էլ՝ իրանց Բօնախ շունն, որից նա իր այծարածութեան ընթացքում երբէք չէր բաժանւի:

Ղաղօի ջահելութեան հասակում ոչ ոք չէր յանդգնի նրա հետ հանաք անել կամ նրա նախրին ծուռ աչքով մտիկ տալ, բայց երբ անելացաւ-ծերացաւ և առողջ աչքովն էլ՝ այնքան էլ լաւ չէր տեսնում, ամեն մէկը սկսեց նրան նեղացնել և իր գործից ձանձրացնել: Մանաւանդ զիւղի չարածձի մանուկներն՝ օ՛, Տէր մի արասցէ թէ մի



Ղաղօի ընկեր Բօնախը

օր տներումը անգործ մնային, իսկոյն խմբէ խումբ հաւաքւում, գնում էին հանդը, նախրի մօտ և Ղաղօի գլխին էն խաղն էին բերում, որ ասել անկարելի է:

Ղաղօն անձրև ու կարկուտ ասած

բանն իսկի չէր սիրում, որովհետև, նախ՝ իր շորերն ու տրեխներն էին թրջւում և ոտքից ու հագից հանւում, ապա՝ իբրև կոյր ու տարիքով մարդ, շուտ-շուտ ոտքը սօթ էր պրծնում և ցեխի մէջ փռւում ու ցեխակոլոր էր լինում, և՛ երրորդ, անձրևի ու կարկուտի ժամանակ անտէր այծերը կամ կտրկան էին լինում և այս ու այն կողմը ցրւում, և կամ դար ու փոս ընկնելով՝ այլ ևս ինքը չէր կարողանում նախիրն իրար հաւաքել ու ժամանակին կթի բերել: Շատ անգամ նոյն իսկ, այդ «գէշ» եղանակներին, այծերից մի քանիսը մնում էին չօլումն և գայլ ու արջի փայ դառնում: Ահա հէնց այս էր իսկական պատճառը, որ Ղաղօն մահու չափ ատում էր «թացէին» եղա-

նակը: Տղաներն այդ լաւ գիտէին և ամեն տեսակ խաղ էին խաղում նրա գլխին:

II

Մի անձրևախափան օր, երբ Ղաղօն նախիրը հանդից քշել էր տուն՝ կթի և այծերը Հէքմի «չօթօլն» (դարմանանոց) արւած սպասում էին, որ ամեն մարդ գայ, իր կիթը կթի. իսկ ինքը՝ հաղիւ մի քիչ հանգստացած, նստել էր իրենց սրահումը և «սաղը» ձեռք առած զընդ-զնգացնում էր ու ճաշի սպասում, յանկարծ՝ որտեղից որ էր, չարածձի տղաները հաւաքւեցին Հէքմի կալը:

Մինչ մէկի հարսն ու միւսի սկեսուրն էր եկել իրանց այծերը կթելու և մինչ Ղաղօի մայրը, պառաւ Քալի նանը, նրա համար մի չարեքաթաս «կօնչօլ»

(կերակուր) էր պատրաստել, որ նա ճաշի ու նախիրը նորից արօտի տանի, — մեր մանուկները նստոտել էին չօթօլի մօտ դտնւած սաղարտախիտ տանձենու սաւերի տակ և առանձին քըշփշում էին:

Ղաղօն՝ հէնց նոր էր նստել հացի. Բօնախն էլ կողքին երկարւած, դուռնչը դրել էր առաջին երկու ոտքերի վրայ և պատառի էր սպասում, որ «համփ» անի և կուլ տայ... Այդ միջոցին մանուկներից մէկը, Փառնանց փոքրիկ Վասիլը, ծոցից մի թղթակտոր հանեց և սկսեց բարձր ձայնով «սուտումուտ» կարգալ. «Տղերք, Աստծու պատիժը հասել է, փալչի ուստայ Աթին էսօր գիր է բաց արել, էս է, որ-



Ղաղօն սաղ ածելիս

տեղ որ է, մի թունդ անձրեւախառն կարկուտ է գալու:

— Ա. տնածակ, դորթ որ, հրէն «ճալու» կողմը ամպել է ու գէշ սեակներ, — մէջ ընկաւ Սաքօն:

— Պա հօ հօ, ընդուր իրիկունը երազումս խաղող էի քաղում է՝ աւելացրեց Մադին:

Այս խօսքն ու զրոյցը Ղաղօն որ իմացաւ, Տէր իմ Աստուած, ասա թէ ի՞նչ արաւ. տեղից վեր թռաւ, մահակն ձեռքն առաւ, ու տղերանց ետեւիցն ընկաւ: Էլ անպատիւ, անկարգ խօսքեր, էլ հէրն ու մէր, էլ հին ու նոր, էլ ազգ ու տակ չը թողեց. թուքը բերանը կալած, բոլորն իրար խառնեց, որովհետեւ ատելով ատում էր և անձրեւն, և կարկուտը և՛ առհասարակ ամեն մի հակառակ խօսք:

Մինչ մանուկները, հեռու մօտիկ կանգնած, ջգրու կրկնում էին Աթնի գուշակութիւնն ու իրանց երազները, Ղաղօն, պատատակերին էլ քար ու կիր չը թողեց, ձեռքն ընկածն անդադար չպնտում էր ու հայհոյեանքախառը կրկնում.

— Բա ի՞նչ. բա ի՞նչ, արեւ է անելու, որ մեռներ, արեւ է անելու:

Քալի նանն իմանալով իր որդու անել գրութիւնը, դուրս եկաւ կալ, սկսեց քաղցրաբար խնդրել մանուկներին, որ հեռանան, բայց երբ նրանք չը լսեցին պառաւ կնոջ թախանձաքին, նա սկսեց. «Ի՞նչ էք ուզում էս անձար ողորմելուց, ի՞նչ էք կատաղել, դուռն է դուռ ընկել: Սպասեցէք Սօլօմը (Ղաղօն փոքր եղբայրը) գայ, տեսէք թէ ձեր արեւը սրտեղ է մթնացնում»:

Ձէն ու ձունից՝ թաղեցիք դուրս էին եկել թամաշի. Մանուկները տեսնելով, որ բանը սուր կերպարանք է ստանալու, թողեցին ու փախան... Ղաղօն նրանց անհետանալուց յետոյ, հանգիստ անալով, վերադարձաւ, որ բրթուճն ուտի, բայց ի՞նչ տեսաւ: Կօնչօյն ու երկու հացը շան փայ էր դառել: Սոված Բօնախը հարայնորոցից օգտւել, վրայ էր ընկել ու Ղաղօնի ճաշը մի լաւ մաքրազարդել:

Ղաղօնի արիւնը գլուխն ընկաւ, փայտն առաւ ու մանուկների ոխն էլ շանիցը հանեց. էնքան մահակով տուր

տաւ նրան, որ շունը պոչը ետին ոտքերի արանքը կոխած, կրթանչելով՝ գլուխն առաւ ու կռնաւ:

Մանուկների ծիծաղին վերջ չը կար, նամանաւանդ այն ժամանակ, երբ նրանք հեռուից իմացան երկու ընկերոջ, շանն ու Ղաղօն մէջ առաջացած կուռ իսկական պատճառը:

III

Մի օր էլ հուքմի էր, Ղաղօն աւելի ջանել ժամանակներում... Մաճկալ ու հոտաղ, բանւոր ու մշակ, սայլապան ու փայտահատ, մի խօսքով, գիւղի մեծն ու փոքրը՝



«Չորմիշ» եղած (նստոտած) որոճում էին

գործի չէին գնացել: Ամեն մարդ իր տանն ու դռանը նստած, իր ընտանիքի հետ, հնից ու նորից, տան ակասպակասից զրոյց էր անում...

Փառնանց պատիկ Վասիլը, Օրդականց Մադին, Ջիլաւանց Նիկախն ու մի երկու, թէ երեք էլ ուրիշ «նօքար» տղերք, «խօսքը մին» արին և վեր կացան գնացին, որ համ Ղաղօն ձանձրացնեն, «զաղաբեղար» անեն, համ էլ ծաղկաւիլ քաղեն հանդերիցը:

Այդ օրը Ղաղօն նախիրը քշել էր «Բէժանի դօբինը». է՛ն կանաչ տափերի վրայ՝ այծերից ոմանք ցան ու ցրիւ եղած, մուշ-մուշ արածում էին ծաղկակոլոր խոտը, ոմանք

էլ չորմիշ եղած Ղաղօի առաջ որոճում էին: Ինքը Ղաղօն, փափախը դրել էր տակը, նստել մի ծառի տակ և շւին դնչին դրած՝ ինչ որ «կտրէկտուր» երգ էր նւագում: Նրա հաւատարիմ ընկեր Բօնախ շունը, գունդ ու կծիկ եկած ծառի ստւերում, գլուխը կոխել էր պոչի տակ և խորը քնել, էն «թել-թել» կանաչ խոտերի մէջ:

Մանուկները հասան նախրին. նրանք առաջուց որոշել էին թէ ի՞նչ պէտք է անեն: Ամենքն իրանց խօսքի համեմատ՝ նախրի շրջապատոյս փորսող պառկեցին: Զիւլաւանց Նիկալը վրայ ընկաւ, մի այծի առաջին երկու ոտքից բռնեց, շալակեց ու սկսեց չորեքթաթ փախչել: Նոյնը կրկնեց նաև Օրդականց Մաղին... Շալակւած այծերը՝ մի այնպիսի գիլ աղաղակով մըկըկացին, մի այնպիսի հարահրոց բարձրացրին, որ ամբողջ նախրը կտրկան լինելով՝ խոտնեց ու դայլ տեսածի պէս սկսեց ցիր ու ցան ընկնել: Խեղճ Ղաղօն կարծեց թէ այծեր տանողները գայլեր են, ոտքի կանգնեց և որքան կոկորդուս ուժ կար սկսեց «հարայ» կանչել:

— Այ քեափուր հա, այ քեափուր հա: — Այնուհետև իր ընկերներին դառնալով, սկսեց՝

— Բօնախ հօ, Բօնախ հօ, տարան, հասիր:

Մինչ շունը ոտքի թռաւ և սկսեց վազել շալակւած այծերի կողմը, Ղաղօն շարունակեց.

— Էհէյ Պետի, Պետի — Պետին Ղաղօի ուլարած ընկերն էր, որն ոչ այնքան հեռու, ուլերն էր արածացնում:

Մինչև Պետրոսը կըգար և մինչև գիւղից Ղաղօի հաւարին օգնութեան կըհասնէին, Բօնախ շունը վրայ հասաւ, շալակած այծերի ետին ոտքերից բռնեց, ձիգ-ձիգ անելով աղերանց ձեռներից խլեց և ընկնելով Մաղիի ու Նիկալի վրայ՝ նրանց գլորեց, շորերը ծւրկ-ծւրկ պատառ-պատառ անելով, ուզեց որ ետ փախչի... Բայց վայրու տղիս-տղայ, դարան մտած միւս ընկերները վրայ տւին շանը — էն տուրը տւին խեղճ անասունին, որ Բօնախը կոնձկոնձալով գլուխն առաւ ու փախաւ, գէպի տուն:

Մինչ այս, մինչ այն, այծերը լսելով ուլերի մըկըկոցը՝ վազեցին գէպի նրանց. նրանք էլ թռչկոտալով վրայ ընկան իրանց մայրերի պտուկներին ու անոնշ-անոնշ կաթը ծըծեցին ու կշտացան:

Ղաղօի ոյժը կտրւել էր. այս օրհասական վիճակում Պետին եկել՝ անշաղ միայն ծիծաղում էր:

Տղերքն այս անգամ հերիք համարելով իրանց խաղը՝ թողին Ղաղօին ու գնացին աւիլ քաղելու:

Այդ օրը, այդ դառն խաղից յետոյ, այծերն էլ կթի չգնացին, որովհետև ուլերն արդէն մէր էին եղել ու այծերի ստինքները դատարկել...

Իսկ Ղաղօն, մինչև իրիկուն հա գւռում էր, հա անիծում...

Եւ այս օրինակ սև ու մահ օրեր քաշելուց յետոյ՝ Ղաղօն վերջը մեռաւ և հազիւ հանգստացաւ չարաճճի մանուկների տանջանքից:


Աստուած ողորմի հոգուդ, Ղաղօ...

(Արտատպած «Հատկեր»-ից)

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Գիսակ, Միսակ, Տիրան, Միհրան,	Թէև մի բառ, բայց վանկերում
Վառօ, Մարօ, խելօք Միրան,	Տարբեր միտք է պարունակում,
Եկէք, տեսնենք, կարող էք դուք	Երկուսն էլ տան տիկնոջ ձեռքին
Վճռել իմ այս հեշտ հանելուկ:	Գործ են ածուած ժամանակին:

Մի բառ գիտեմ երկվանկանի,	Խեղճ գեղջուկի օրը սև է,
Չարագուշակ նա ձայն ունի...	Եթէ երկար նա կը տևէ,
Ուզենք, չուզենք՝ պատուհաս է,	Առանց նրան գէթ մի տարի
Բայց երկնքից ցած կըվազէ:	Հազիւ անցնի լիքն ու բարի:



ՁԻԱՐՇԱԻ

րանք չորս թէ հինգ հոգի էին, եօթ-ութ տարեկան, մի թաղի և գրեթէ մի գերդաստանի երեխաներ—Աղբաբանաց այս ու այն հօրեղբորորդու գաւակներն՝ Իսակն ու Միսակը, Տիրանն

ու Միհրանն և հինգերորդն էլ՝ Սուտիկ Ստեփանը:

Նրանք, որովհետեւ երեխայութիւնից միմեանց հետ ապրած, մէկ-մէկու հետ խաղացած, շատ անգամ էլ, մէկը միւսի մօր կաթն ուտելով էին մեծացել և այդ մանկական հասակին հասել, այսօր, այդ թըռուռան ու կրակոտ տարիներումն էլ՝ նոյնքան միմեանց սիրելի էին ու մտերիմ և նոյնքան էլ կուած ու իրարից նեղացած...

Բայց, այսպէս թէ այնպէս, զարմանալի էին նրանք՝ թէ իրանց խմբով և թէ բնաւորութեամբ: Տարւայ եղանակների, ամիսների, նոյն իսկ օրերի տարբերութեամբ էլ՝ փոփոխական էր նրանց խաղն ու պարը, խօսքն ու զրոյցը, տրամադրութիւնն ու ցանկութիւնը: Մի խօսքով, բնութեան յատուկ գաւակներ էին նրանք, կեանք կար նրանց մէջ, մանկական մաքուր կեանք, անմեղ ու անաբատ հոգի:

Գարունը բացւում էր թէ չէ, նրանք միասին, դաշտ ու ձոր ընկած, բաղ ու բաղչա շրջելով, մի տեղ շիշիթ, ծնէփակ, զօխ ու բօխ էին քաղում, մի տեղից հազար

գոյսի ծաղիկներ փնջում, մի ուրիշ տեղ էլ՝ թուփ ու գիլասով կշտանում: Իսկ երեկոները տուն վերադառնալիս, չէին մոռանում նաև իրանց կորած էշերը գտնել, հեծնել և այնպէս աղավարի տուն վերադառնալ:

Ամառը գալուն պէս, նրանց ամենքի բախտը բանում էր: Անտառների մօշը, շօրն ու հունը և ուրիշ գանազան մրգեր, այգիների տանձն ու խնձորը: Ղեղձն ու թուզը նրանց փոքր գերիներն էին. դէսից-դէնից ստանում և կամ հէնց իրանք էին ճարուկ-մարուկ անում և կտրկում (կուլտալ):

Աշունը մտնելուն պէս, շատ խաղող ուտելուց տեղներիցը հագիւ էին շարժւում: Եւ այս բոլորի ընթացքումն ի հարկէ, անպակաս էին և նրանց սիրելի երգ ու պարերն, և տեսակ-տեսակ խաղերն, որ գանազան անուններ ու ձևեր ունէին. ինչպէս օրինակ՝ «Ջիրիթախաղ» կամ «Ջիարշաւ»-ը, «Մօլլու-մօլլու»-ն, «Կընդափէտին», «Լագան-լագան» և ուրիշ սրանց նման հարկւրաւորները...

Մի անգամ, աշնան վերջին օրերից մէկին, երբ եղանակը պատահական կերպով վարնան եղանակի էր նման, մեր մանուկներն, էն եօթ-ութ տարեկան ցեցերից՝ շէկիկ Իսակը, բոբիկ Միսակը, սրտոտ Տիրանն ու սուտիկ Ստեփանը, վեր կացան—գնացին՝ «Ջիրիթախաղ»-ի, այսինքն ձիարշաւ խաղալու:

Շատ հետաքրքիր էին նրանք մանաւանդ իրանց ձիաներով. մէկը հեծել էր իր ապնի ձեռնափայտը, միւսը մի ցախաւի կօթ, երրորդն ու չորրորդն էլ լօբու մի-մի սարի (ձող) և շարքով կանգնել ու իրանց հրամանատար Ստեփանի կարգադրութեանն էին սպասում:

Կանգնած ժամանակ էլ նրանք շատ անհանգիստ էին. ձախ ձեռքով բռնած ունէին շէքերի միջից անցկ կոցրած ձողերի ծայրերից՝ իբրև ձիերի սանձից, աջ ձեռքն առաջ ու յետ ձօճելով, ոտքերը յաճախ տափին էին թակում, որպէս թէ ձիաներն են ոտքերով գետինը տրօփում և առանձին ախորժակով էլ խրինջացնելով՝ մեր սպիտակ մա-

տակի երկու տարեկան քուռակի ձայնն էին յիշեցնում ինձ։
 — Ի՜նչ, հի, հի, հի... խրխշում էր Միսակի ձին։
 — Փռռռ, հը՛ռ, հը՛ռ, հը՛ռ... փռնչում էր Իսակի քեօհլանը։
 — Սը՛, ս, ս, ս... բալա ջան, սը՛, ս, ս, գուրգուրում
 և փաղաքշում էր Տիրանն։ Իսկ Ստեփանը, իր հեծած ձողի
 յետին ծայրով մէկ-մէկ խփում էր իր ընկերների փայտե-
 րի ծայրերին, որպէս թէ, ձիաները միմեանց աքացի են տալի։
 — Ագա, ասում չեմ ձիուդ գլուխը քաշած պահի՛,
 հրամայում էր խոժոռած (բարկացած) սուտիկ Ստեփանը
 երբ մէկն ու մէկին նկատում էր չափից գուրս անկար-
 գութիւն անելիս։



Ստեփանը կըլտիպող՝ թող էր եղել

Վերջապէս, ձիաւորները պատրաստ էին։ Հրամանա-
 տարը հարկաւոր պատուէրները տալուց յետոյ, բարձրա-
 ձայն գոռաց։

— Մին, էրկու, իրէք... և հայդէ, բոլորը մէկից չափ
 ընկան ու թռան։ Ամեն մէկն ուզում էր և միւտի առաջը
 կտրել և որքան կարող է առանձին գեղեցկութիւն և «երիշ»
 (ձև) տալ իր վագելուն։

Նրանք, մօտ մի ժամ վագելին ու թռան, ծուլլւան ու
 ցատկեցին. էս մի բլրակի գլուխը բարձրացան, էն մի
 երանդից ցած թռան. ճանապարհի մի ծայրից խփեցին,
 միւսովը գուրս եկան... վագելիս էլ անդադար կրկնում էին՝

Ով աղաք, աղաք՝
 Նա հասնի քաղաք,
 Ով յետի, յետի՝
 Նրա ձին փետի։

Ասում էին ու վագում... էնքան վագելին, վագ-վը-
 գեցին, որ ոտք ու ձեռքից ընկնելով, յոգնածութիւնից
 կարմիր պուտ դառան։

Գրտինքը սկսել էր կաթ-կաթ հոսել ճակատներից այ-
 տերի վրայ, այտերից՝ շրթունքէներն և այդ տեղից էլ շատ
 անգամ բերանն էին խպշտում...

Ու, այս կրակ կտրած խաղի ժամանակ, երբ մի վեր-
 ջին անգամ էլ պէտք է մօտակայ բլրակի գագաթն ելնէին,
 և հրամանատարի կողմից էլ պատուէրն արդէն տւած էր,
 յանկարծ՝ միւսներն աւելի քաջ եղան, ոյժ տւեցին իրանց
 ծնկներին ու հրամանատար Ստեփանից առաջ ընկնելով,
 շուտ բարձրացան բլրակի գագաթը։ Եւ մինչ տղաները ու-
 րախութեամբ աղաղակում էին.

— Ե՛ս, Է՛ս, Է՛ս չնւտ հասնյ...

— Վայ, վա՛յ Ծէփանը յետի-յետի... Մէկ էլ, նայեցին
 տեսան, որ Ստեփանը կըլտիպուզ թող է եղել քամակի վրայ
 և շատ ամուր գետին է թրմփացել։

Էլ հերիք, փոքրիկներն իրանց յոգնածութիւնը մոռա-
 նալով սկսեցին խնդալ ու ծիծաղել՝ իրանց հրամանատարի
 անշնորհութեան վրայ.

— Պահ, էնա վեր իր ընգնում հա՛, Ծէփան, ձեռքերը
 ցած ու բարձր անելով ծիծաղում էր Իսակը...

— Տը՛րըր, կանգնի՛ր Վասկա ջան, տեսա՞ր էր անում Տիրանը
 իր ընկերոջ ձիուն...

— Վահ, դո՛ւ է, դո՛ւ Ծէփանի ձին, էնքան էլ դարի է ու-
 տացրել, որ թռչում է ու չիմուս առաջն է ընկնում, խօ-
 սում էր բօբիկ Միսակը։

— Տղէ՛ք, էն Աստոծը Էս սուտ վեր ընգալ, արդարա-
 նում էր սուտիկ Ստեփանը, ասի մին տեսնում՝ թող կըլէմ...

— Հա՛, սէց չէ, սնց չէ, սուտ վեր ընգար, հազիր ասես


լաւ գեղնովն ես դիմել. ծաղրում էին երեխեքը մէկ-մէկու յետեից:

— Տղէրք, ոնց որ անումը Սուտիկ է, ինքնէլ էնպէս սուտիկ է եղել, համա ի՜նչ լաւ ասել են է...

Վերջացաւ խաղը. հրամանատարը իր ընկերներից վիրաւորւած, վեր կացաւ և խռով-խռով, առանձին ճանապարհով տուն վերադարձաւ, իսկ միւսները՝ և՛ յոգնածութիւնից ջարթ ու խուրդ եղած, և՛ այդ գէպից խրատւած, կամաց-կամաց, անխօս ու անծպտուն՝ իրանց ձիւները ձեռնափայտ շինեցին և գետնին դեմհար տալով, ճանապարհէնցին դէպի տուն...

Այնուհետև Ստեփանը մօտ մի ամիս տկար էր: Վաչը ընկած ժամանակ, քանի քրտնած ու տաք է եղել, ոչինչ չէր նկատել, երբ եկել էր տուն, աննկատելի կերպով մրսել էր ու հիւանդացել: Թէև այսպիսի փորձանքներ շատ էր պատահել մեր փոքրիկ հերոսին, բայց այս անգամւանը վտանգաւոր էր համարւում և թալալ հարսը գրեթէ մի ամիս Ստեփանովն էր զբաղւած:

Այդպէս է միշտ, ով չափից դուրս կըխաղայ՝ նա կըկաղայ...



ԺԻՏՆ ՈՒ ՄԱՆՈՒԿՐ

ստիկ-մասիկ ան ծիտիկ,
Քանի թուչես ծառից-ծառ,
Գոնէ մի տեղ քիչ տիտիկ,
Յոգնած թևիդ հանգիստ առ:

— Ճը՛ղղ-վը՛ստ, ճը՛ղղ-վը՛ստ, ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ,
Ես յոգնելու սովոր չեմ,
Կուգեմ լինեմ մեծ արծիւ,
Որ աւելի շատ թուչեմ:

— Ա՛յ դու պստիկ մեծամիտ,
Արծիւ լինել ցանկացար,
Որ անպաշտպան ընկերիդ՝
Իսկոյն անես կտցահաւ:

Էլ չը խօսեց ծիտիկը,
Թևին տւաւ ու թռաւ,
Իսկ մեր խելօք աղջիկը
Նորից գիւրքը ձեռքն առաւ:



ԿԱԼՆՈՐԴԻ ՄՐՄ ՈՒՆՋՆԵՐԻՅ

Հօ՛ւօվե՛լ, հօ՛ւօվե՛լ հօ՛ւօվե՛լ օ՛...

Կալ արա՛, եղբ ջա՛ն, կալ արա՛,

Կալա մէջ մա՛ն ու մա՛ն դալ արա՛,

Ցորենը բընահա՛ն մեղ արա՛,

Ծղնօտից էլ դարմա՛ն քեղ արա՛...

Ա՛յ եղբ բշէ՛, բշէ՛:

Հօ՛ւօվե՛լ, հօլօլլօ՛, հօ՛ւօվե՛լ օ՛...

Պարաքի տակ կօրեկ եմ, եղբ ջա՛ն,

Գեղամէջ մարդ չունեմ ինձ պաշտպա՛ն,

Դո՛ւն ես իմ ախպէրը օղնակա՛ն,

Կալ արա՛, ռաներիդ ես «ղուբբա՛ն».¹⁾

Ա՛յ եղբ բշէ՛, բշէ՛:

Հօլօլլօ՛, հօւօվե՛լ, հօ՛ւօվե՛լ, օ՛...

Եղբ ջա՛ն, «համկալ»²⁾ ջա՛ն, մա՛ն արա՛,

էս օր էլ «չիդարգա՛ն»³⁾ բա՛ն արա՛,

Շուա անենք, պարաքի տանք մեր աղի՛ն,

Թէ չէ՛ ձեռն կուտենք «հախ-նահախի՛ն».⁴⁾

Ա՛յ եղբ բշէ՛, բշէ՛:

Հօ՛ւօվե՛լ, հօլօլլօ՛, հօլօլլօ՛, օ՛...

Վարեցինք, ցանեցինք միասին,

Հնձեցի, կրեցիր քո ուսին,

Կալ անենք, բտաղիւ քո բաժին,

«Խրդուռն»⁵⁾ էլ ես անեմ մեր «լաշի՛ն».⁶⁾

Ա՛յ եղբ բշէ՛, բշէ՛...

1) Զոհ լինել, 2) վարուցանքի ընկեր, 3) սրտալի, 4) իզուր տեղը,
5) մնացորդ՝ ցորենի և կոշտ հասկերի և 6) մարմին:

«Ազգային գրադարան»



NL0390975

6340